# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 151-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, նկատի ունենալով, որ հավելվածում նշված հողամասերը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չեն օտարել աճուրդով, հիմք ընդունելով քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից տրված եզրակացությունները և սույն որոշման հավելվածներում նշված դիմումատուների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ հողամասերը տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի պահպանման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել անշարժ գույքերի սեփականատերերին՝ տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում NN 1, 2 հավելվածներում նշված դիմումատուներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Մ. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Մ. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

Հավելվա

Հայաստանի Հանրապետության Շիրակ
մարզի Գյումրի համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 03-ի
N 151-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

| Հ/Հ | Սեփականատիրոջ անուն, հայրանուն, ազգանուն | Գույքի գտնվելու վայրը (հասցեն) | Հողամասի կադաստրային ծածկագիր | Հողամասի մակերես քառ.մ | Հողամասի տարածա-գնահատման գոտի | Հողամասի նպատակային և գործառնական նշանակություն | Հողամասի օտարման արժեք | Դիմումի համարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայկազ Հմայակի Մինասյան | Խ. Կոշտոյան փողոց N 14/9 | 08-001-0460-0054 | 31,4 | 10 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 214587 | 22.08.2025թ. N 12181 | |
| 2 | Վարդան, Աննա, Աստղիկ, Հակոբ Բաղդասարյաններ Օֆելյա Կարապետյան | Մ. Գորկու փողոց 2-րդ փակուղի N 22/5 | 08-001-1352-0808 | 26,3 | 9 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 276518 | 26.02.2024թ. N 3852 | |

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 03-ի
N 151 -Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | Սեփականատիրոջ անուն, հայրանուն, ազգանուն | Գույքի գտնվելու վայրը (հասցեն) | Հողամասի կադաստրային ծածկագիր | Հողամասի մակերես քառ.մ | Հողամասի տարածա-գնահատման գոտի | Հողամասի նպատակային և գործառնական նշանակություն | Հողամասի օտարման արժեք | Դիմումի համարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ալինա, Մացակ, Վարդան, Վարդուշ Գևորգյաններ | Տիմիրյազևի փողոցի № 57 | 08-001-0354-0048 | 104.5 | 9 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 1098713 | 26.09.2025թ. N 14679 | |
| 2 | Ռոբերտ Կարլենի Աբրահամյան | Մ. Գորկու փողոց 2-րդ փակուղի N 26 | 08-001-1352-0498 | 37.97 | 9 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 399216 | 12.09.2025թ. N 13719 | |
| 3 | Սամվել, Արուս, Վարդան, Սուսաննա Վալեսյաններ | Ղարիբջանյան խճուղի շենք N1 բնակարան N1 | 08-001-1032-0030 | 136.64 | 11 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 606955 | 28.06.2024թ. N 11179 18.11.2025թ. N 17779 | |